«ԶՎԱՐՃԱԼԻ ՖՐԱՆՍԵՐԵՆ» ամառային գործնական դասընթաց արցախցի դպրոցականների համար

ՆԱԽԱԳԾԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Մենք ենք մեր սարերը» կազմակերպությունը Ֆրանսիայի «Սատար Արցախին» միության աջակցությամբ և Երևանի Միսաք Մանուշյանի անվան թիվ 48 դպրոցի տնօրինության հետ համագործակցությամբ 2024թ. մարտ-հունիս ամիսներին կազմակերպել է ֆրանսերենի լրացուցիչ պարապմունքներ արցախցի դպրոցականների համար, որպեսզի վերջիններս կարողանան կարճ ժամանակամիջոցում յուրացնել ուսումնական նյութը և հասնել իրենց դասընկերներին: Հաջողված փորձը խրախուսել է կազմակերպիչներին շարունակելու երեխաների հետ աշխատանքը նաև ամռանը:

Հուլիսի 1-19-ը կազմակերպվում է «Զվարճալի Ֆրանսերեն» ամառային գործնական դասընթացը, որին, բացի Մ.Մանուշյանի անվան դպրոցի արցախցի աշակերտներից կարող են ընդգրկվել նաև ֆրանսերենի ուսուցմամբ այլ դպրոցներից արցախցի աշակերտներ:
Դասընթացը կանցկացվի Երևանի «Երազ» այգու տարածքում, երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան 9:30-ից մինչև 12:30-ը: Ծրագրով նախատեսված է զվարճալի ուսուցում, որը ներառում է ֆրանսերենով խաղեր, համատեղ երգեցողություն, բանավոր դերախաղեր, գրավոր վարժություններ և այլն: Կեսօրին երեխաներին կմատուցվի ճաշ:
Ծրագրին երեխաների մասնակցությունն անվճար է:

ԲՅՈՒՋԵ

Մեկ երեխայի մասնակցության ծախսը՝	**215 ԱՄՆ Դոլար**
Արժեքը 40 երեխայի համար՝	**8 600 ԱՄՆ Դոլար**
ԸՆԴԱՄԵՆԸ՝	**8 600 ԱՄՆ Դոլար**

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխարհագրություն	**Երևան, Արաբկիրի վարչական շրջ., «Երազ» այգի**
Իրականացման ժամկետ	Հուլիսի 1-19-ը, 2024 թ.

ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

- Անմիջական շահառուներ՝ **40 արցախցի աշակերտներ և Արցախից տեղահանված ֆրանսերենի ուսուցիչներ**
- Անուղղակի շահառուներ՝ **երեխաների ընտանիքներ, շուրջ 120 հոգի**

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ

- Մասնակիցները կօգտվեն հարստացնող փորձից, որը համատեղում է զվարճալի մոտեցումը և ֆրանսերենի արդյունավետ, արագացված ուսուցումը, հնարավորություն կունենան անկաշկանդ միջավայրում զարգացնել ֆրանսերենով շփվելու իրենց կարողությունը՝ ամրապնդելով լեզվական հմտությունները
- Արտահայտվելու և իրենց փորձով կիսվելու հնարավորությունը կնպաստի երեխաների հուզական բարեկեցությանը և սոցիալական ինտեգրմանը:
- Երեխաները հնարավորություն կունենան բացահայտելու նոր մշակույթ և ընդլայնել իրենց մտահորիզոնը:
- Այս փորձը կխթանի հետաքրքրությունը լեզուների ուսուցման նկատմամբ և կօգնի ձեռք բերել արժեքավոր հմտություններ իրենց ակադեմիական և մասնագիտական ապագայի համար: